ՁԼՄ էթիկայի Դիտորդ մարմնի եզրակացությունը

2008 թվականի հունիսի 25-ի «Առավոտ» օրաթերթում հրապարակված

«Եթե հարեւանդ ոստիկան է» հոդվածի վերաբերյալ

2008 թվականի հոկտեմբերի 24-ին ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել «Առավոտ» օրաթերթի լրագրող Ռուզան Մինասյանը՝ խնդրելով ժուռնալիստական էթիկայի տեսանկյունից եզրակացություն տալ թերթի 2008 թվականի հունիսի 25-ի համարում հրապարակված «Եթե հարեւանդ ոստիկան է» հոդվածի վերաբերյալ: Սույն եզրակացությունը պարզաբանում է հիշյալ հրապարակման համապատասխանությունը Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի 31 լրատվամիջոցների մշակած եւ ստորագրած Վարքականոնին:

Քննարկելով «Առավոտ» օրաթերթի 2008 թվականի հունիսի 25-ի համարում հրապարակված Ռուզան Մինասյանի «Եթե հարեւանդ ոստիկան է» հոդվածի համապատասխանությունը ՁԼՄ-ների Վարքականոնին, Դիտորդ մարմինը արձանագրում է հետեւյալը.

Հոդվածում Վարքականոնի եւ մասնագիտական էթիկայի միջազգայնորեն ընդունված կանոնների միանշանակ խախտումներ չկան:
Միաժամանակ, որոշ տարակույսների տեղիք է տալիս «... Ղեւոնդյանը, գործի դնելով իր ոստիկանական կապերը...» արտահայտությունը, որը, ըստ հոդվածագրի, հիմնված է վկայի ցուցմունքների վրա, սակայն հոդվածում համապատասխան հղում արված չէ եւ ընկալվում է որպես հեղինակային խոսք:

Այսուհանդերձ, այն արտահայտությունները, որոնք վիճարկվում են իբրեւ «պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկություններ» եւ «փաստացի անճշտություններ», ոչ թե փաստեր են, այլ հոդվածում բերված փաստերի հիման վրա արված եզրակացություն կամ գնահատող դատողություն, իսկ դրանց ճշմարտացիությունը կամ իրականությանը համապատասխանությունը ապացուցելի չեն: Այդ մասին նշված է նաեւ Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի՝ «Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» գործով վճռի 46-րդ կետում. «Դատարանի կարծիքով անհրաժեշտ է տարբերակում դնել փաստերի եւ գնահատող դատողությունների միջեւ: Եթե փաստերի հավաստիությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունների ճշմարտացիությունն անապացուցելի է» (European Court of Human Rights, CASE OF LINGENS v. AUSTRIA, 08. 07.1986, Application No: 9815/82, Publication: A 103): Այս ձեւակերպումը Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը հետագայում եւս մի քանի անգամ օգտագործել է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման առնչությամբ քննված նմանատիպ այլ գործերի վճիռներում:

Ռուզան Մինասյանի հոդվածում օգտագործված են որոշ սուր արտահայտություններ, որոնք արտացոլում են հասարակության մեջ արմատացած կարծրատիպերը եւ նույնպես լրագրողական մասնագիտական էթիկայի տեսակետից վիրավորանք համարվել չեն կարող:

Ընդունվել է ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի
2008 թվականի հոկտեմբերի 31-ի նիստում